ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱ

ՍԵՓԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՄԲ (ԿԱՄԱՎՈՐ) ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ
ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԹԵՍՏԻ
ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՆԱԽԱԲԱՆ

Ուղեցույցում ներկայացվում են ուսուցչի ատեստավորման քննության թեստի կառուցվածքը, տրվում են առաջադրանքների կառուցվածքային տեսակների նկարագրությունը, պատասխանի գնահատման չափանիշները և պատասխանների՝ ձևաթղթում լրացման կարգի բացատրությունները, գրականության ցանկը:

ԹԵՍՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Թեստը պարունակում է 46 առաջադրանք, որոնցից հնարավոր է վաստակել առավելագույնը 70 միավոր: Բովանդակային առումով թեստում ընդգրկված են «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի չափորոշիչ ծրագրի հետևյալ բաժինները՝ գիտելիքների հիմունքներ, մարմնամարզական և աթլետիկական վարժություններ, մարզախաղեր, շարժողական ընդունակություններ և ընտրովի ուսումնական նյութ: Կառուցվածքային առումով առաջադրանքներն ունեն հետևյալ 2 հիմնական տեսակները՝ ընտրովի պատասխանով և կարճ պատասխանով:

Ընտրովի պատասխանով առաջադրանքների դեպքում տրվում են պատասխանի 4-ական տարբերակներ, որոնցից պետք է ընտրել մեկը: Ճիշտ պատասխանի դեպքում տրվում է 1 միավոր: Սխալ պատասխանի կամ պատասխանի բացակայության դեպքում միավոր չի տրվում:

Կարճ պատասխանով առաջադրանքների դեպքում տրվում են 7-9 տարբերակներ, որոնցից պահանջին համապատասխանում են որևէ 3-ը. դրանցից յուրաքանչյուրի համարի ճիշտ նշման դեպքում միավոր է տրվում. այսպիսով, տվյալ առաջադրանքներից հնարավոր է վաստակել 1, 2 և առավելագույնը 3 միավոր:

ՁԵՎԱԹՂԹԻ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

Ընտրովի պատասխանով առաջադրանքների դեպքում ճիշտ պատասխանին համապատասխանող վանդակում հարկավոր է դնել X նշանը: Միևնույն առաջադրանքի համարի տակ մեկից ավելի նշում կատարելու դեպքում տվյալ առաջադրանքը գնահատվում է 0:

Կարճ պատասխանով առաջադրանքներից յուրաքանչյուրի ճիշտ պատասխանի համարներին համապատասխանող վանդակներում հարկավոր է դնել X նշանը: Չի կարելի կատարել 3-ից ավելի նշում: Տվյալ առաջադրանքի տողում ցանկացած 4 և ավելի նշում ունենալու դեպքում առաջադրանքը գնահատվում է 0, եթե անգամ ճիշտ են որևէ 1, 2 կամ 3 նշումներ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1.	Առաքելյան Վ. Բ., Ղազարյան Ֆ. Գ., Գրիգորյան Յու. Գ., Մինասյան Հ. Ս., Հարությունյան Ա. Ա.	Ֆիզիկական կուլտուրա: Ուսուցչի ձեռնարկ հանրակրթական դպրոցի 1-4-րդ դասարանների համար, Երևան, «Աստղիկ գրատուն», 2008, 184 էջ:
2.	Առաքելյան Վ. Բ., Ղազարյան Ֆ. Գ., Գրիգորյան Յու. Գ., Հարությունյան Ա. Ա.	Ֆիզիկական կուլտուրա: Հանրակրթական դպրոցի 2-րդ դասարանի դասագիրք, Երևան, 2009, 128 էջ:
3.	Գրիգորյան Յու. Գ., Մինասյան Հ. Ս.	Հանրակրթական դպրոցի «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի չափորոշիչ և ծրագիր, 1-12-րդ դասարաններ, Երևան, 2012, 139 էջ:
4.	Գրիգորյան Յու. Գ. Մինասյան Հ. Ս.	«Ֆիզիկական կուլտուրա» առարկայի ավագ դպրոցի չափորոշիչ և ծրագիր, 10-12-րդ դասարաններ, Երևան, ԾԻԳ, 2009, 94 էջ:
5.	Գաբրիելյան Հ. Հ., Ղազարյան Ֆ. Գ., Մինասյան Հ. Ս., Գրիգորյան Յու. Գ.	Ֆիզիկական կուլտուրա. դասավանդման մեթոդիկա 5-9-րդ դասարաններ: Ուսուցչի ձեռնարկ /Կազմ. հեղ. Խումբ, Եր.: 2013.- 120 էջ:
6.	Ծառուկյան Գ. Ն., Առաքելյան Վ. Բ., Ղազարյան Ֆ. Գ., Գրիգորյան Յու. Գ., Հարությունյան Ա. Ա.	Ֆիզիկական կուլտուրա: Հանրակրթական դպրոցի 3-րդ դասարանի դասագիրք, Երևան, «Աստղիկ գրատուն», 2010, 128 էջ:
7.	Ծառուկյան Գ. Ն., Առաքելյան Վ. Բ., Ղազարյան Ֆ. Գ., Գրիգորյան Յու. Գ.	Ֆիզիկական կուլտուրա: Հանրակրթական դպրոցի 4-րդ դասարանի դասագիրք, Երևան, «Աստղիկ գրատուն», 2011, 128 էջ:
8.	Մինասյան Հ. Ս., Գաբրիելյան Հ. Հ.	«Ֆիզիկական կուլտուրա» գիտելիքի հիմունքներ, Երևան, 2011, 128 էջ:
9.	Մամաջանյան Վ. Մ.	Աթլետիկա: Ուսումնական ձեռնարկ: Եր: 2003, 187 էջ
10	Ղազարյան Ֆ. Գ.	Մարզիկների կոնդիցիոն ընդունակությունների մշակման հիմունքները: Ուսումնական ձեռնարկ, Եր.: 2008, 60 էջ
11	Խիզանցյան Ռ. Մ., Սելումյան Ն. Վ.	Մարմնամարզության հիմնական միջոցները դպրոցում (1-12-րդ դասարաններ), Ուսումնական ձեռնարկ Եր.: 2014, 190 էջ
12	Ասմարյան Կ. Խ.	Վոլեյբոլ: Երևան, Ուսումնական ձեռնարկ, 2007, 176 էջ